



0084, Армения, Ереван, ул.Зор. Андраники 1
Тел: 72 00 10 Факс: 72 01 21

Zor. Andranik st. 1, Yerevan, Armenia, 0084
Tel: 72 00 10. Fax: 72 01 21
E-mail: hvenbec@gmail.com

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
0084 Հայաստան, Երևան, Զոր. Անդրանիկի 1,
Հեռ. 72 00 10, Ֆաքս. 72 01 21

No. 04-2

«15» 01 2015թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները» N 1521-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև Ընկերության գործունեության արդյունավետության բարձրացման, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ընկերություն-հասարակություն կապի հնարավորությունների ընդլայնման նպատակով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ընկերության ցանցային գլխավոր ադմինիստրատորին /Հ. Գրիգորյան/
 - 1.1 սահմանված կարգով ապահովել կայքի նախագծման, ձևավորման, տեղադրման և ընթացիկ սպասարկման աշխատանքները,
 - 1.2 3-օրյա պարբերականությամբ՝ ապահովել Կայքում փոխկապակցված վեբ էջերի, պատկերների, տեսանյութերի կամ այլ թվային միջոցների թարմացման աշխատանքները,
 - 1.3 ապահովել կայքի մատչելիությունը՝ տեղեկությունը գտնելու պարզությունն ու հարմարավետությունը և տարբեր ձևաչափերով այն ստանալու հնարավորությունը:

